1.6. ՀՈՒՆԱՍՏԱՆ. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵԶՐԵՐ

ԱՐՄԻՆԵ ԶԱԽԱՐՅԱՆ
ՌԱԶՄԻԿ ԻՍԱՀԱԿՅԱՆ
25.07.2021-20.08.2021

Ներածություն

Համաշխարհային տնտեսությունում Հունաստանը հայտնի է զարգացած արդյունաբերությամբ, զբոսաշրությամբ, գյուղատնտեսությամբ և գինեգործությամբ: Հին Հունաստանի վաղ տնտեսական զարգացումը պայմանավորված էր մի շարք պատմաաշխարհագրական գործոնների ազդեցությամբ: Մասնավորապես՝ Հունաստանը բարենպաստ պայմաններ ուներ վարելահողերի մշակման, ձիթապտղի աճեցման, այգեգործության և խաղողագործության, ինչպես նաև անասնապահության համար: Օգտակար հանածոներով երկրի հարուստ լինելու հանգամանքը նպաստեց արհեստների և առևտրի զարգացմանը: Միաժամանակ Հունաստանի աշխարհագրական դիրքը շատ հարմար էր նաև նավագնացության զարգացման համար: Բացի այդ, երկրի վաղ տնտեսական զարգացմանը մեծապես նպաստեց Հին Արևելքի երկրների մշակութային նվաճումների ժառանգումը:

Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման ներկայիս փուլում առանձնահատուկ նշանակություն ունի արտասահմանյան երկրների տնտեսությունների զարգացման առաջավոր փորձի ուսումնասիրությունն ու արդյունավետ կիրառումը: Հատկապես մեծ ուշադրության է արժանի այն երկրների փորձը, որոնք աշխարհաքաղաքական տեսանկյունից որոշակի ընդհանրություններ ունեն մեր երկրի հետ: Այս համատեքստում որոշակիորեն կարևորվում է Հունաստանի տնտեսության զարգացման փորձի ուսումնասիրությունը, ինչն էլ պայմանավորում է մեր հետազոտության թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակն է Հունաստանի տնտեսական փորձի ուսումնասիրության միջոցով Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման գործոնների և մեխանիզմների բացահայտումը: Հետազոտության խնդիրն է Հունաստանի տնտեսության առանձին ոլորտների զարգացման փորձի վերլուծության արդյունքների հիման վրա ՀՀ տնտեսության ոլորտների զարգացման հավանական ուղիների մշակումը:

Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման առաջնահերթ ուղղություններն են հանքարդյունաբերությունը, էներգետիկան, ռազմաարդյունաբերությունը, մետաղագործությունը, հաստոցաշինությունը, քիմիական արդյունաբերությունը, թեթև և սննդի արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, վերամշակող արդյունաբերությունը և զբոսաշրջությունը: Թվարկված գրեթե բոլոր ոլորտներում Հունաստանն արձանագրել է որոշակի

հաջողություններ, ինչը կարող է օգտակար լինել նաև Հայաստանի Հանրապետության համար: Առանձնահատուկ ուշադրության է արժանի նաև Հունաստանի միջազգային համագործակցության փորձը՝ տնտեսական և քաղաքական կապերի զարգացման և ամրապնդման տեսանկյունից: Երկիրը Եվրամիության, ՆԱՏՕ-ի, ՄԱԿ-ի, Եվրոպայի խորհրդի, ԵԱՀԿ լիիրավ անդամ է և պատկանում է զարգացած երկրների շարքին:

Հոդվածում մանրամասնորեն դիտարկվել է Հունաստանի տնտեսության կայացման և հետագա զարգացման երկարամյա փորձը: Առանձնահատուկ ուշադրություն է հատկացվել արդյունաբերության, գյուղատնտեսության և զբոսաշրջության ոլորտների զարգացման առանձնահատկություններին, ինչպես նաև վերլուծվել են Հունաստանի 2014-2020 թթ. հիմնական տնտեսական ցուցանիշները:

Գրականության ակնարկ

Հունաստանի տնտեսության զարգացման պատմական փորձը ներկայացվել է մի շարք աշխատություններում: Մասնավորապես՝ Հունաստանի տնտեսության զարգացման հիմնական միտումները մանրամասնորեն ներկայացված են Գ. Վաչնաձեի և Ա. Գոլովլևայի հետազոտություններում[1]: Հեղինակները դիտարկել են Հունաստանի սոցիալ-տնտեսական մոդելի առանձնահատկությունները, մարդկային ներուժը, ոլորտային կառուցվածքը, հարկաբյուջետային համակարգը, ֆինանսական հատվածը, սոցիալական և տարածաշրջանային խնդիրները, ինչպես նաև վերլուծել են Հունաստանի արտաքին տնտեսական հարաբերությունները:

Հունաստանի տնտեսության զարգացման առանձնահատկությունները ներկայացված են նաև Յու. Դ. Կվաշնինի խմբագրությամբ «Ժամանակակից Հունաստանը համաշխարհային տնտեսության և քաղաքականության մեջ» հոդվածների ժողովածուում[2], որը պատրաստվել է Ե. Մ. Պրիմակովի անվան համաշխարհային տնտեսության և միջազգային հարաբերությունների ազգային հետազոտական ինստիտուտի անձնակազմի կողմից: Ժողովածուում դիտարկվել են Հունաստանում ընթացիկ պարտքային ճգնաժամի և Եվրամիության այլ երկրներում հակաճգնաժամային քաղաքականության հունական փորձը, եվրոպական և համաշխարհային տնտեսության վրա Հունաստանի ֆինանսական խնդիրների ազդեցության հիմնահարցերը, ինչպես նաև երկրի քաղաքական զարգացման առանձնահատկությունները: Առանձնահատուկ ուշադրություն է հատկացվել ռուս-հունական հարաբերությունների զարգացման առկա վիճակին և դրանց հետագա զարգացման հեռանկարներին:

---

[1] Вачнадзе Г., Головлева А., Грибков А., Ермаченков И., Комаров И., Мишина О., Сальберг К., Стенина Т., Тимофеева Л.. Проект ПОЛПРЕД: Деловая Греция, том III. Экономика и связи с Россией в 2002-03 гг., Москва: Издательство «ПИК ВИНИТИ», 2004, 34 с. ISBN 5-900034-38-0

[2] Современная Греция в мировой экономике и политике. Сборник статей. Отв. ред. – Ю.Д. Квашнин. – М.: ИМЭМО РАН, 2013, 184 с. ISBN 978-5-9535-0381-5

Պ. Ուսանովի «Տնտեսագիտական մտքի հետահայաց. Հին Հունաստանից մինչ օրս» աշխատությունում[1] ներկայացված է տնտեսագիտական մտքի ծագման և զարգացման ողջ պատմական ընթացքը: Հեղինակն անդրադարձել է հայտնի փիլիսոփաների և տնտեսագետների (Լաո Ցզի, Արիստոտել, Պլատոն, Թովմա Աքվինացի, Ա. Սմիթ, Կ. Մարքս, Ջ. Մ. Քեյնս, Ֆ. ֆոն Հայեկ, Լ. ֆոն Միսես, Մ. Ռոթբարդ և այլք) գաղափարներին, որոնք մինչ օրս դեռ չեն կորցրել իրենց արդիականությունը, քանի որ ներկայիս տնտեսական խնդիրներից շատերը պարզապես հնարավոր չէ հասկանալ՝ չանդրադառնալով գաղափարների պատմությանը:

Հետազոտության մեթոդաբանություն

Հետազոտության համար տեսամեթոդական հիմք են հանդիսացել մակրո և միկրոտնտեսագիտության, կառավարման, միջազգային տնտեսական հարաբերություններին առնչվող աշխատությունները, տնտեսության տարբեր ոլորտների զարգացման խթանման հիմնախնդիրները լուսաբանող հայրենական և արտասահմանյան հեղինակային հրապարակումները, գիտաժողովների հրապարակած նյութերը, դիտարկվող ոլորտների գործառույթները և փոխհարաբերությունները կանոնակարգող նորմատիվ բնույթի իրավական ակտերը և այլն:

Հետազոտության ընթացքում կիրառվել են համակարգային և իրավիճակային վերլուծության, տնտեսավիճակագրական խմբավորումների, ինդուկցիայի և դեդուկցիայի, համեմատական և գործոնային վերլուծությունների և գիտական աբստրահման մեթոդները:

Վերլուծություն

Հին Հունաստանի սոցիալ-տնտեսական առաջընթացի արագացուցիչներ են համարվում տոհմային համայնքի վաղ քայքայումը և կառավարման հանրապետական ձևը, որն ապահովում էր անձնական ազատության և քաղաքացիների ունեցվածքի պահպանման, ստրկական աշխատանքի արդյունավետ օգտագործման հուսալի երաշխիքներ: Հնագիտական տվյալները վկայում են, որ Հին Հունաստանի տարածքը բնակեցված էր դեռևս պալեոլիթի դարաշրջանում: Մ. թ. ա. VII հազարամյակում երկրում արդեն կար գյուղատնտեսություն և անասնապահություն:

Հունաստանի տարածքը 131 957 քառ. կմ է, երկիրը գտնվում է Բալկանյան թերակղզում և բազմաթիվ կղզիներում: Մայրաքաղաքը Աթենքն է: Այն սահմանակից է Ալբանիայի, Հյուսիսային Մակեդոնիայի, Բուլղարիայի և Թուրքիայի հետ: 2019 թ. Հունաստանի բնակչությունը կազմել է 10.7 միլիոն մարդ: Բնակչության շուրջ 97 % -ը ուղղափառ է[2]:

---

[1] Усанов П., Ретроспектива экономической мысли. От Древней Греции до современности, Монография, СПб, издательство Страта, 2019, 300 с. ISBN 978-5-6041463-7-8

[2] Греция, Население, https://knoema.ru/atlas/Греция

Ժամանակակից Հունաստանը՝ որպես ազգային պետություն, իր պատմությունը սկսել է 1829 թվականից և մեծամասամբ հանդիսանում էր հիմնականում գյուղատնտեսության վրա հիմնված չզարգացած տնտեսական գոտի[1]: Այդ ժամանակվանից ի վեր այն վերափոխվել է արդիականացված և զարգացած երկրի:

19-րդ դարի սկզբին Հունաստանը մուտք է գործում նոր նվաճած անկախության ժամանակաշրջան: 1833 թ. հույները վերահսկողություն հաստատեցին պատերազմից ավերված գյուղական վայրերի նկատմամբ, որոնք մասամբ ամայացած էին պարզունակ հողագործության հետևանքով: Հունաստանն, ինչպես նաև Սերբիան, որոնք միաժամանակ էին անկախություն ստացել Օսմանյան կայսրությունից, այլ պետությունների հետ հաղորդակցության սահմանափակության հետևանքով արտաքին առևտրի ընդլայնման տեսանկյունից հանդիպել էին որոշակի խոչընդոտների: Նույնիսկ 19-րդ դարի վերջին Հունաստանի գյուղատնտեսությունը գտնվում էր թերզարգացած վիճակում: Անգամ Աթենքի անմիջական հարևանությամբ հնարավոր էր գտնել 2000 տարի առաջ օգտագործված գութան և կոպիտ թոխր: Դաշտերն անընդհատ մշակվում էին այնքան ժամանակ, մինչև որ հյուծված հողը այլևս բերք չէր տալիս: Պարարտանյութեր գրեթե չէին օգտագործվում: Որոշ շրջաններում առկա էր ոռոգման համակարգ, որը շատ մոտ էր հին եգիպտացիների համակարգին: Հունաստանը հարուստ է եղել բարձրորակ ձիթապտղով և խաղողով, իսկ հունական ձիթապտղի յուղը և հունական գինին գրավել են բազմաթիվ սպառողների: Բացի այդ, դիտարկվող ժամանակահատվածում Հունաստանն ուներ գյուղական ազնվականության և կղզիների նավատերերի հարուստ խավ, ինչպես նաև 36 000 քառ. կմ լրացուցիչ հող, որը բռնագրավվել էր պատերազմի ընթացքում վտարված մահմեդական սեփականատերերից:

Նկատենք նաև, որ հողային բարեփոխումները Հունաստանի առաջին իսկական փորձությունն էին և ուղղված էին ազատ գյուղացիների դասի ստեղծմանը: 1835 թ. «Հունական ընտանեկան դրամաշնորհների մասին» օրենքով յուրաքանչյուր ընտանիքի տրամադրվում էր 2000 դրախմա վարկ, որը տրվում էր ցածր տոկոսներով աճուրդում 49 000 քառ. մ հողատարածք (ֆերմա) գնելու համար: Այդ տարիներին երկիրը լի էր տեղահանված փախստականներով և դատարկ թուրքական կալվածքներով: Տասնամյակների ընթացքում իրականացված մի շարք հողային բարեփոխումների միջոցով Հունաստանի կառավարությունը այդ բռնագրավված հողերը տրամադրեց վետերաններին և աղքատներին, և արդեն 1870 թ. հույն գյուղական ընտանիքների մեծամասնությունն ունեցավ մոտ 81 000 քառ. մ հողատարածք: Նորաստեղծ գյուղացիական տնտեսությունները շատ փոքր էին բարգավաճելու համար, սակայն հողային բարեփոխումները նպաստեցին հասարակու-

[1] Экономическая история Греции и греческого мира, https://ru.qaz.wiki/wiki/Economic_history_of_Greece_and_the_Greek_world

թյան անդամների միջև հավասարության ապահովմանը և ընտանիքների նյութական կարիքների բավարարմանը: Վերջինս էլ հանգեցրեց բնակչության կենսամակարդակի որոշակի բարելավման և հասարակության շերտավորման մակարդակի նվազեցման:

1960-1970 թթ. արտաքին կապիտալի ներգրավման, խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների հիմնադրման խթանման պետական քաղաքականության իրագործման և արտաքին առևտրի ընդլայնման շնորհիվ Հունաստանը դարձավ արդյունաբերական-ագրարային պետություն: Ակտիվացել է նաև արտադրության համակենտրոնացման և կենտրոնացման գործընթացը: Ներկայում հունական և օտարերկրյա խոշոր մենաշնորհները վերահսկում են երկրի ամբողջ արդյունաբերության կեսից ավելին: Երկրի արդյունաբերական զարգացումն արագացավ, ինչի հետևանքով կատարվեց տնտեսության կառուցվածքային վերափոխում: Եվ արդեն 1979 թ. արդյունաբերությանը բաժին էր ընկնում համախառն ազգային արդյունքի 34 %-ը, իսկ գյուղատնտեսությանը՝ ընդամենը 14: Այնուամենայնիվ, ծառայությունների ոլորտը դեռևս շարունակում էր առաջատար դիրք գրավել համախառն ազգային արդյունքի ստեղծման գործում՝ կազմելով շուրջ 52 %: Ծառայությունների ոլորտում կարևորագույն տեղը զբաղեցնում էին ծովային տրանսպորտը, այդ թվում՝ հունական նավերի միջազգային բեռնափոխադրումները և արտասահմանյան զբոսաշրջությունը:

2001 թ. Հունաստանի անդամակցությունը Եվրոպական արժութային միությանն ունեցավ երկակի հետևանքներ. այն մի կողմից խթան հանդիսացավ տնտեսական աճի համար, մյուս կողմից՝ սրեց շատ հին խնդիրները: Երկիրն ունեցավ հսկայական արտաքին պարտք և առևտրային հաշվեկշռի աճող դեֆիցիտ:

2010-2011 թթ. Հունաստանի տնտեսությունը հայտնվեց ճգնաժամի մեջ: Համախառն պարտքը 2010 թվականի մարտի վերջին հասավ 300 միլիարդ եվրոյի: Բյուջեի դեֆիցիտը նույնպես զգալի էր՝ 12,7 %: Կառավարության կողմից մշակված հակաճգնաժամային միջոցառումների փաթեթը ներառում էր քաղծառայողների աշխատավարձերի կրճատում, սպառողական հարկերի բարձրացում և կենսաթոշակների աճի կասեցում: Ստեղծված իրավիճակում եվրոգոտու երկրները Հունաստանին տրամադրեցին մի շարք երկկողմ վարկեր՝ ԱՄՀ-ի վարկերի հետ մեկտեղ:

Ժամանակակից Հունաստանի տնտեսության ուժեղ կողմն այն է, որ երկիրը եվրոպական ամենակարևոր տուրիստական կենտրոններից մեկն է: Բացի այդ, Հունաստանն արտահանում է մեծ քանակությամբ գյուղատնտեսական արտադրանք, իսկ բեռնափոխադրող ընկերություններն ունեն աշխարհում ամենամեծ առևտրային ծովային նավատորմը: Հունաստանի տնտեսության թույլ կողմերն են խոշոր պետական պարտքերը, բարձր վար-

կային տոկոսադրույքները, աշխատատեղերի անբավարար քանակը և ստվերային տնտեսության առկայությունը:

Ներկայացնենք Հունաստանի տնտեսության զարգացման վիճակն ըստ առանձին ճյուղերի[1]:

- **Արդյունաբերություն:** Ինչպես Եվրոպական որոշ փոքր երկրներում, այնպես էլ Հունաստանում արդյունաբերության ճյուղերը զարգացած են անհամամասնորեն, իսկ դրանցից որոշներն էլ առհասարակ բացակայում են, օրինակ՝ ավիացիան և հաստոցաշինությունը: Երկրի արդյունաբերական դեմքը դեռևս որոշվում է թեթև արդյունաբերության ավանդական ճյուղերով՝ տեքստիլ, սննդամթերք, ծխախոտ, կարի և կոշկեղենի արդյունաբերություն: Սակայն վերջին տարիներին համեմատաբար արագ են աճել նավթաքիմիան, էլեկտրատեխնիկան, ցեմենտի արտադրությունը, լեռնահանքային արդյունաբերությունը և ավանդական մետաղագործությունը: Հունական արդյունաբերությունն աշխատում է հիմնականում ներքին շուկայի համար, չնայած որ նույնիսկ նրա համեմատաբար փոքր պահանջարկը լիովին բավարարված չէ: Առավել զարգացած են թեթև սննդի արդյունաբերությունները: Հունաստանի արդյունաբերությունում զբաղված է աշխատունակ բնակչության 21 %-ը: Գործում են նաև մեքենաշինության, նավթաքիմիայի և փայտամշակման արդյունաբերական ձեռնարկություններ: Առաջնահերթ զարգացում են ստացել տեքստիլի, սննդի արդյունաբերության ճյուղերը և շինանյութերի արտադրությունը (ցեմենտի՝ աշխարհում ամենամեծ գործարանը գտնվում է հունական Վոլոս քաղաքում): 1970-ականներից սկսած Հունաստանի դրոշի ներքո գրանցվել են տարբեր երկրների բազմաթիվ նավեր, ուստի անվանական առումով Հունաստանն ունի աշխարհում ամենամեծ քաղաքացիական նավատորմը: Հունաստանի առափնյա ջրերում ձկնորսությունն ունի բացառիկ նշանակություն: Արտարժութային եկամուտների մեծ մասը շարունակում է ապահովել նավաբեռնափոխադրումը՝ Հունաստանի տնտեսության ամենակարևոր ճյուղը: Ստորև անդրադառնանք Հունաստանի արդյունաբերության կարևորագույն ճյուղերին.

✓ *Հանքարդյունաբերություն:* Ներկայում Հունաստանում մեծ ուշադրություն է հատկացվում ավանդական հանքարդյունաբերության զարգացմանը: Երկրում օգտակար հանածոների հանքավայրերը բավականին շատ են, բայց մեծ մասամբ դրանք հարուստ չեն: Այստեղ արդյունահանում են բոքսիտներ, պիրիտներ, երկաթ-նիկելի հանքաքարեր, մագնեզիտներ և շագանակագույն ածուխ:

✓ *Էներգետիկ արդյունաբերություն:* Երկիրն աղքատ է էներգետիկ ռեսուրսներով և ունի միայն ցածրորակ շագանակագույն ածուխ-լիգնիտի մեծ

[1] Вачнадзе Г., Головлева А., Грибков А., Ермаченков И., Комаров И., Мишина О., Сальберг К., Стенина Т., Тимофеева Л.. Проект ПОЛПРЕД: Деловая Греция, том III. Экономика и связи с Россией в 2002-03 гг., Москва: Издательство «ПИК ВИНИТИ», 2004, стр. 2-7.

պաշարներ: Հունաստանի շագանակագույն ածուխի հիմնական հանքավայրերը գտնվում են Պտոլեմանսի շրջակայքում և Պելոպոնես թերակղզում՝ Մեգալոպոլիս քաղաքի մոտակայքում: Էգեյան ծովի Թասոս կղզու մոտակայքում հայտնաբերվել են 19 միլիոն տոննա պաշարներով նավթահանքեր և ստորջրյա գազի հանքավայրեր: Գազ է հայտնաբերվել է նաև ցամաքում՝ Ֆլորինի շրջանում:

✓ *Մետաղագործություն:* Հունաստանում գործում են սև մետաղագործության մոտ տասը ձեռնարկություն: Բոլորն էլ գտնվում են Մեծ Աթենքում, Սալոնիկում և Վոլոսում: Մեծ Աթենքում գործում է ամբողջական ցիկլով միայն մեկ մետաղագործական գործարան: Երկրի մետաղագործության հիմքը՝ ալյումինի և ֆեռոնիկելի ձուլումն է: Հունաստանում գործում է կավահողի և ալյումինի արտադրության միակ ձեռնարկությունը, որը կառուցվել է Պառնասյան բոքսիտի հանքավայրում՝ ալյումինի արտահանման Իտեա նավահանգստին հարող տարածքում: Կենտրոնական Հունաստանի Լարիմնա քաղաքում արտադրվում է նաև ֆեռոնիկել՝ LARCO գործարանում:

✓ *Մեքենաշինություն:* Հունաստանում մեքենաշինական արդյունաբերությունը կենտրոնացած է հիմնականում Մեծ Աթենքում, որտեղ արտադրվում են գյուղատնտեսության և գինեգործության համար անհրաժեշտ սարքավորումներ և պահեստամասեր: Այստեղ գործում են նաև մեծ և փոքր նավաշինարաններ:

✓ *Քիմիական արդյունաբերություն:* Մեծ Աթենքի քիմիական գործարանները և Պտոլեմոնկա ածխաքիմիական համալիրն արտադրում են թթուներ, հանքային պարարտանյութեր, ամոնիակ, թուրինտի յուղ, պոլիվինիլ-քլորիդ և արհեստական մանրաթելեր: Հունաստանի տնտեսության մեջ զգալի դերակատարում ունի ցեմենտի արտադրությունը, որը հիմնված է տեղական հումքի՝ պոզոլանի օգտագործման վրա: Հունաստանը ցեմենտի արտահանմամբ (ընդհանուր արտադրության 1/3-ը) աշխարհում զբաղեցնում է երրորդ տեղը՝ Ճապոնիայից և Իսպանիայից հետո:

✓ *Թեթև արդյունաբերություն:* Հունաստանի վերամշակող արդյունաբերության ոլորտում առաջնային դիրքը շարունակում է զբաղեցնել թեթև արդյունաբերությունը, հատկապես՝ տեքստիլ: Տեքստիլ արտադրանքի զգալի մասն արտահանվում է տարբեր երկրներ. արտահանման շուրջ 80 %-ը ուղղվում է Գերմանիա, Ֆրանսիա և Մեծ Բրիտանիա: Սննդամթերքի արտադրության ոլորտում առանձնանում է շաքարի արդյունաբերությունը, որը լիովին բավարարում է երկրի ներքին շուկան: Շաքարի ամենամեծ գործարանները տեղակայված են Պլատի, Լարիսա, Քսանթի և Սերե քաղաքներում:

- **Գյուղատնտեսություն:** Հունաստանում գյուղատնտեսությունը մեծամասամբ հիմնված է փոքր մասնավոր ֆերմերային տնտեսությունների վրա: Խոշոր ֆերմերային միավորումները դեռևս սահմանափակ տարածում ունեն: Գյուղատնտեսական խոշոր ձեռնարկությունների մեծամասնությունը

ստեղծվել է Եվրամիության օժանդակությամբ: Գյուղատնտեսության ոլորտն ապահովում է Հունաստանի տնտեսության ընդհանուր զբաղվածության մոտ 12 %-ը, ինչպես նաև ՀՆԱ-ի 7 %-ը: Այս ոլորտում ներգրավված է նաև մեծաթիվ օտարերկրյա աշխատուժ: Հունաստանը արտադրում է գյուղատնտեսական ապրանքների լայն տեսականի՝ բանջարեղեն, մրգեր, անասնապահական և ձկնորսական արտադրանքներ: Երկրում անտառտնտեսությունն ունի երկրորդային դերակատարում: Որոշակի առումով Հունաստանի գյուղատնտեսությունը թերզարգացած է բերրի հողերի բացակայության, տարեկան ցածր տեղումների և հողերի անարդյունավետ հողօգտագործման համակարգի պատճառով: Երկրի հողերի մոտ 30 %-ը վարելահողեր են: Լայնամասշտաբ արտադրություն հնարավոր է կազմակերպել միայն Թեսալիայի, Թրակիայի և Մակեդոնիայի հովիտներում: Այստեղ աճեցվում են ցորեն, եգիպտացորեն, գարի, շաքարի ճակնդեղ, բամբակ և ծխախոտ: Վերջին երկու մշակաբույսերի արտադրության առումով Հունաստանը ԵՄ երկրների շարքում առաջատարն է: Երկրում լավ զարգացած են նաև այգեգործությունը և բանջարաբուծությունը. աճեցվում են ձիթապտուղ (մեծ մասն անմիջապես վերամշակվում է ձիթապտղի յուղի), խաղող, սեխ, դեղձ, նարինջ, լոլիկ: Հունաստանը ԵՄ երկրներ է արտահանում նաև ցիտրուսային և բանջարաբոստանային արտադրանք:

- **Զբոսաշրջություն:** Տարեկան կտրվածքով Հունաստան է այցելում ավելի քան 19 միլիոն զբոսաշրջիկ, ինչն ապահովում է երկրի ՀՆԱ-ի 15 %-ը: Հունաստանը հնագույն ժամանակներից իր հարուստ պատմությամբ ու ավանդույթներով գրավել է բազմաթիվ օտարերկրյա այցելուների: Վերջին տարիներին զգալիորեն զարգացել է նաև լողափային զբոսաշրջությունը: Կրետեն, Պելոպոնեսը և Հռոդոսը իրենց անկրկնելի գեղեցկությամբ բավականին հարմար վայրեր են հանգստի կազմակերպման համար: Կրետեում՝ Հերսոնիսոս գյուղից ոչ հեռու, գտնվում է մի գեղեցիկ հրվանդան, որտեղից երևում է ամբողջ կղզին, ինչը հատկապես գրավիչ է զբոսաշրջիկների համար: Հռոդոսում՝ Կալիտեայի մոտակայքում, զգացվում է Հունաստանի ողջ հյուրասիրությունը: Պիրգոսում գտնվող Պելոպոնես կղզին (հունարեն՝ Աշտարակ) ամբողջ Միջերկրական ծովում ունի ամենաերկար ավազոտ լողափը: Միկոնոսը և Սանտորինին աշխարհի ամենահայտնի կղզիների զբոսաշրջային վայրերից են: Զբոսաշրջության և հարակից ոլորտներն ապահովում են երկրի զբաղվածության մոտ 16 %-ը: Հունաստանի կառավարությունը մտադիր է խթանել ձմեռային, բժշկական, ուխտագնացության, գյուղատնտեսական և այլ տեսակների զբոսաշրջության զարգացումը, ինչն ավելի կմեծացնի զբոսաշրջիկների հոսքը: Հունաստանի Զբոսաշրջության ազգային կազմակերպության նոր տարբերանշանը բաղկացած է զբոսաշրջության ինը նոր տեսակները խորհրդանշող շրջանակներից, որոնք անհրաժեշտ է զարգացնել զբոսաշրջության սեզոնայնության դեմ պայքարելու նպատակով:

Ինչպես հայտնի է, տևական ժամանակ Հունաստանն առանձնանում էր արտաքին տնտեսական քաղաքականության մեկուսացված (ավտարկիկ) բնույթով: Ասոցիացիայի ստեղծման վերաբերյալ «Փոքր Եվրոպայի» երկրների ղեկավարների հետ 1962 թ. Աթենքի համաձայնագիրը արմատապես փոխեց իրավիճակը: Հունաստանի արտաքին տնտեսական քաղաքականության հիմքն են կազմել եվրոպական ինտեգրմանը մասնակցությունն ու բաց տնտեսության ստեղծումը: Ներկայում Բալկաններում գործում են հունական բազմաթիվ համատեղ ձեռնարկություններ: Հունաստանի շահեկան աշխարհագրական դիրքը նպաստում է արտաքին տնտեսական կապերի արդյունավետ զարգացմանը: Հունաստանի կառավարությունը խթանների հարուստ փաթեթ է տրամադրում տնտեսության տարբեր ոլորտներում արդյունավետ ներդրումների իրականացման համար:

Հունաստանը գրեթե բոլոր միջազգային կազմակերպությունների (NATO, WTO, IMF, EBRD) անդամ է[1], ինչը հնարավորություն է ընձեռում ընդլայնել իր քաղաքական և տնտեսական դիրքն ու ազդեցությունը աշխարհում, հատկապես Միջերկրածովյան-Բալկանյան տարածաշրջանում: Հունաստանն ակտիվ է նաև ՄԱԿ-ում, հատկապես ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովում (UNECE): 1949 թվականից Հունաստանը Եվրոպայի խորհրդի անդամ պետություն է: 1992 թվականի Վիեննայի ԵԽ գագաթնաժողովից հետո Հունաստանը մասնակցում է նաև Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (OSCE) աշխատանքներին և կառուցողականորեն դեմ է բոլոր զինված բախումներին: Հունաստանի արտաքին քաղաքականության ամենակարևոր գերակայությունը Եվրամիությանն անդամակցությունն է: Հունաստանը Եվրամիությանը (այդ ժամանակ՝ Եվրոպական տնտեսական համայնք) միացավ 1981 թվականին՝ երկարատև համագործակցությունից հետո: 2000 թ. հունվարի 1-ից երկիրը մտավ նաև Շենգենյան գոտի և միացավ Տնտեսական և արժութային միությանը՝ այդպիսով դառնալով Եվրոգոտու 12-րդ լիիրավ անդամ: ԵՄ ընդլայնմանն աջակցությունը Հունաստանի քաղաքականության հիմնական բաղադրիչներից է: Միաժամանակ Հունաստանն ակտիվորեն ներգրավված է Արևմտյան Եվրոպական Միության (WEU)՝ եվրոպական երկրների ռազմաքաղաքական կազմակերպության, Տրանսպորտի նախարարների եվրոպական համաժողովի և Եվրահանձնաժողովի աշխատանքներում:

Հունաստանի դրամական միավորը եվրոն է: Դրամավարկային քաղաքականությունը որոշվում է կառավարության կոմիտեի կողմից, որի կազմում ընդգրկված են համակարգման (կոորդինացիայի), ֆինանսների, առևտրի, գյուղատնտեսության և արդյունաբերության նախարարները, ինչպես նաև Հունաստանի բանկի կառավարիչը: Հիմնական վարկային հաստատություն-

[1] Греция / Участие в международных организациях, основные внешнеполитические контрагенты и партнёры, отношения с Россией, http://www.hyno.ru/tom1/573.html

ներն են Պետական գյուղատնտեսական բանկը, Հունաստանի ազգային բանկը, մասնակիորեն սեփականաշնորհված Հունաստանի արդյունաբերական զարգացման բանկը, Հունաստանի առևտրային բանկը, Հոնիական (Ionian) բանկը և Հունաստանի ժողովրդական բանկը: 1990-ական թվականների կեսերին իրականացվել է բանկային հատվածի ազատականացում: Նախկինում պետության կողմից վերահսկվող գրեթե բոլոր բանկերի վերահսկիչ փաթեթները հանվել են վաճառքի, ինչն առաջացրել է համախմբման մեծ ալիք: Հունաստանի առաջատար բանկերն ունեն տարածաշրջանային ուժեղ ազդեցություն:

Հունական «տնտեսական հրաշքը» վերաբերում է 1950-1973 թթ. ժամանակահատվածին, երբ երկրում արձանագրվել են տնտեսական և սոցիալական զարգացման տպավորիչ տեմպեր, ինչպես նաև պետական պարտքի բավականին ցածր մակարդակ[1]: Հունաստանի տնտեսական աճի միջին տեմպը հասել է 7 %-ի, որն իր մեծությամբ աշխարհում երկրորդն էր՝ Ճապոնիայից հետո: Տնտեսական աճի տեմպերն առավել բարձր էին հատկապես 1950-ական թթ.՝ հաճախ գերազանցելով 10 %-ը, ինչը պայմանավորված էր արդյունաբերության ճյուղերի արագ զարգացմամբ: Սակայն հետագա տարիներին ներքին և արտաքին գործոնների (հիմնականում 2007-2008 թվականների համաշխարհային ֆինանսական ճգնաժամի) ազդեցության արդյունքում 2008 թ. երկիրն ընկավ երկարատև ռեցեսիայի մեջ, և մինչև 2010 թ. ապրիլը փոխառությունների արժեքի զգալի աճից հետո կառավարությունը գիտակցեց, որ անհրաժեշտ է փրկարար միջոցառումների փաթեթ: 2012 թ. Հունաստանում իրականացվեց ինքնիշխան պարտքի պատմական ամենամեծ վերակազմավորումը: 2014 թ. ապրիլին Հունաստանը վերադարձավ պարտատոմսերի համաշխարհային շուկա՝ հաջողությամբ վաճառելով 4,95 % եկամտաբերությամբ և հնգամյա մարման ժամկետով պետական պարտատոմսեր՝ 3 մլրդ եվրո ընդհանուր արժեքով: 2014 թ. Հունաստանի ՀՆԱ-ի իրական աճը, 5 տարվա անկումից հետո, կազմել էր 0,7 %: 2015 թ. SYRIZA ձախակողմյան կուսակցության ընտրություններից հետո երկրին տրամադրվեց երրորդ ֆինանսական օգնությունը: Հունաստանին ցուցաբերվող օգնությունը հաջողությամբ ավարտվեց 2018-ի օգոստոսի 20-ին: Նշենք նաև, որ 2020-ին 2019 թ. համեմատությամբ Հունաստանի համախառն պետական պարտքն աճել է 15.25 %-ով, մինչդեռ 2019-ին 2018 թ. համեմատությամբ այն նվազել էր 2.62 %-ով[2]: Անշուշտ, 2020-ին պետական պարտքի արձանագրված աճը մեծապես պայմանավորված է Covid-19 համավարակով: Ստորև ներկայացնենք նաև Հունաստանի հիմնական տնտեսական ցուցանիշները (աղյուսակ 1):

[1] Греческое экономическое чудо, https://dic.academic.ru/dic.nsf/ruwiki/1470498#cite_note-1

[2] Греция, https://knoema.ru/atlas/Греция

Աղյուսակ 1

Հունաստանի հիմնական տնտեսական ցուցանիշները (2014-2020 թթ.)[1]

Անվանումը	2014	2015	2016	2017	2018	2019	2020
ՀՆԱ-ի աճը, %	0.7	- 0.4	- 0.5	1.3	1.6	1.9	-8.2
Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն, դոլար	21568	17997	17880	18578	19769	19147	17670
Գործազրկության մակարդակը, %	26.5	24.9	23.6	21.5	19.3	17.3	16.4
Արտահանումը, մլն դոլար	53954.8	56662.3	56427.4	61230.2	66809.6	70046.0	-
Միջազգային տուրիզմից եկամուտները, մլն դոլար	19489.0	17547.0	16811.0	19139.0	21594.0	23003.0	-
Համախառն պե-տական պարտք, մլն դոլար	322000	315000	320000	323000	341000	339000	353000

Ներկայացված տվյալները վկայում են, որ Հունաստանի հիմնական տնտեսական ցուցանիշները ենթարկվել են զգալի փոփոխությունների, մասնավորապես՝ 2017-2019 թթ. ընթացքում նկատվել ՀՆԱ-ի ցուցանիշի որոշակի բարելավում, այնուհետև 2020-ին՝ կտրուկ վատթարացում՝ մինչև -8.2 %: 2020-ին 2014 թ. համեմատությամբ 3898 դոլարով նվազել է նաև մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն: Այս բացասական զարգացումներին հետ մեկտեղ արձանագրվել է գործազրկության մակարդակի նվազեցում 10.1 տոկոսային կետով: 2019-ին 2014 թ. համեմատությամբ աճել են նաև արտահանման ծավալները՝ 16091.2 մլն դոլարով, ինչպես նաև միջազգային տուրիզմից ստացված եկամուտները՝ 3514 մլն դոլարով: 2020-ին 2014 թ. համեմատությամբ 31000 մլն դոլարով աճել է նաև համախառն պետական պարտքը: Ինչպես աշխարհի ուրիշ շատ երկրներ, այնպես էլ Հունաստանը անմասն չմնաց վերջին տարիների ճգնաժամերի առաջացրած հիմնախնդիրներից, որոնք էլ իրենց զգալի ազդեցությունն ունեցան երկրի տնտեսության վրա:

Նկատենք նաև, որ Հունաստանը 2020 թ. զբաղեցրել է 30-րդ տեղը Bloomberg նորարարության համաթվում[2]: Այս համաթիվը երկրները գնահատում է 7 չափանիշներով՝ ներառյալ հետազոտությունների և մշակումների ծախսերը, ինչպես նաև բարձր տեխնոլոգիական ոլորտին պատկանող պետական ընկերությունների թիվը: 2020 թ. բիզնեսի վարման դյուրինությունը բնութագրող Համաշխարհային բանկի Doing Business-ի վարկանիշում Հունաստանը զբաղեցրել է 79-րդ տեղը[3]:

Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության ոլորտի ներկայիս զարգացումները հիմք են տալիս պնդելու, որ Հունաստանի զբոսաշրջության

---

[1] Греция, https://knoema.ru/atlas/Греция

[2] Рейтинг инновационных экономик – 2020: на первое место вышла Германия, https://theworldonly.org/rejting-innovatsionnyh-ekonomik-2020/

[3] Опубликован рейтинг Doing Business 2020: Грузия обогнала Великобританию, Норвегию и Швецию, https://internationalinvestment.biz/business/1475-opeblikovan-reyting-doing-business-2020-gruziya- obognala-velikobritaniyu-norvegiyu-i-shveciyu.html

ոլորտի զարգացման առաջավոր փորձի կիրառումը կարող է մեծապես նպաստել ՀՀ զբոսաշրջության ոլորտի զարգացման տեմպերի արագացմանը: Հետևաբար անհրաժեշտ է, որ զբոսաշրջային այցերի քանակական աճը զուգորդվի նաև մատուցվող որակյալ ծառայություններով՝ հարատև դարձնելու դրանց անընդհատությունը: Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության զբոսաշրջության ոլորտում առկա դրական միտումների մասին է փաստում այն, որ դեպի մեր երկիր զբոսաշրջային հոսքերն աճել են երկնիշ թվերով: Այսպես՝ 2018 թ. առաջին եռամսյակում ՀՀ է այցելել 346.458 մարդ, ինչը 2017 թ. առաջին եռամսյակի համեմատությամբ աճել է 16 %-ով, իսկ 2018 թ. երրորդ եռամսյակում՝ 589.230 մարդ, ինչը 2016 թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել է շուրջ 26 %-ով, 2018 թ. չորրորդ եռամսյակում՝ 376.573 մարդ, ինչը 2017 թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ աճել է 16,8 %-ով: Ըստ ՀՀ ԱՎԿ տվյալների՝ 2009 թ. մեր երկիր այցելել է 590.000, իսկ արդեն 2018 թ. 1.651.783 զբոսաշրջիկ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 10,5 %-ով: 2019 թ. ՀՀ է ժամանել 1.894.377 զբոսաշրջիկ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 14.7 %-ով[1]: Covid-19 համավարակով պայմանավորված՝ 2020 թ. ՀՀ է ժամանել ընդամենը 375.216 զբոսաշրջիկ, ինչը կազմել է 2019 թ. ժամանած զբոսաշրջիկների 19.8 %-ը: Այնուհետև 2021 թ. արդեն նկատվում է ՀՀ ժամանած զբոսաշրջիկների թվաքանակի զգալի աճ, ինչը վկայում է ոլորտի արագ վերականգնման հնարավորության մասին: Վերը ներկայացված ՀՀ ԱՎԿ փաստական տվյալների համաձայն՝ զբոսաշրջային հոսքերը դեպի մեր երկիր դիտարկվող 10 տարիների ընթացքում գրեթե քառապատկվել են՝ հասնելով ավելի քան 1.894.377 մարդու, ինչը վկայում է, որ տվյալ ոլորտն ունի զարգացման լուրջ ներուժ, և այն կարելի է համարել ՀՀ տնտեսության զարգացման այլ ճյուղերին իրական այլընտրանք: Նկատենք նաև, որ Հայաստանն արդեն ընդգրկվել է 10 լավագույն զբոսաշրջային երկրների ցանկում, և աշխարհում հյուրանոցներ առաջարկող ամենահայտնի ճանապարհորդական կայքերից մեկը՝ Booking.com-ը, մայրաքաղաք Երևանն ընդգրկել է 2020 թ. զբոսաշրջային ամենաթրենդային ուղղությունների տասնյակում[2]:

Գիտական նորույթը

Հունաստանի տնտեսության զարգացման փորձի կիրառման արդյունքում հայրենական և օտարերկրյա ներդրողների համար հավասար և գրավիչ հարկային գործիքակազմի մշակումը և կիրառումը, ինովացիոն և ներդրումային գործունեության ֆինանսավորման մատչելիության ապահովումը,

[1] ՀՀ վիճակագրական կոմիտեի վիճակագրական տվյալների բազաներ, միջազգային զբոսաշրջություն, 2009-2019 թթ., https://www.armstat.am

[2] Զբոսաշրջային ամենաթրենդային 10 երկրների ցանկը, 2020 թ., https://ampop.am/number-of-tourists-increasing/, booking.com.

զբոսաշրջության ոլորտում ներդրումների ավելացման միջոցով զբոսաշրջային մասնավոր այցերն ընտանեկանի վերափոխումը (հատկապես մանկական հանգստի կազմակերպման շեշտադրմամբ), կրթության և գիտության ոլորտներում մրցունակ մասնագիտական կադրերի պատրաստման, ինովացիոն արտադրանքների, տեխնոլոգիաների և տեխնոլոգիական լուծումների արդյունավետ փոխանակման միջոցով հայ-հունական համագործակցության ակտիվացումը, տնտեսության տարբեր ոլորտներում հայ-հունական համատեղ մասնավոր, պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների հիմնադրումը, երկու երկրներում զբոսաշրջության զարգացման խթանման նպատակով հայ-հունական համատեղ մշակութային միջոցառումների և փոխադարձ այցելությունների կազմակերպումը մեծապես կարող են նպաստել ՀՀ տնտեսության համաչափ զարգացմանը:

Եզրակացություններ

Ինչպես հայտնի է, Հայաստանի և Հունաստանի հարաբերությունները հիմնված են պատմական բարեկամության վրա[1]: Փոխշահավետ համագործակցության ընդլայնման հավանական առաջնային ոլորտը տուրիզմն է: Վերջին տարիներին Հունաստան մեկնող հայ զբոսաշրջիկների և Հայաստան ժամանող հույն զբոսաշրջիկներ թիվը զգալիորեն աճել է, ինչին հատկապես նպաստել են մեր երկրների միջև ուղիղ օդային կանոնավոր հաղորդակցության վերականգնումն ու չարտերային թռիչքների իրականացումը: Ներկայում Հունաստանը նաև ընտանեկան զբոսաշրջային այցերի իրական հանգրվան է դարձել: Հիանալի ենթակառուցվածք ունեցող մեծ կղզիները հարմար են ընտանեկան զբոսաշրջության կողմնակիցների համար: Այն երեխաների համար պարզապես դրախտ է: Արձակուրդների համար կղզիներից հարմար է ընտրել Հռոդոսը կամ Կրետեն, որտեղ միշտ ջերմ եղանակ է, և ջուրը տաքանում է ծայրահեղ արագ, որը և երեխաների հանգստի ամենահարմար տարբերակն է հանդիսանում: Անշուշտ, Հայաստանի Հանրապետությունը զբոսաշրջային գրավչությամբ և տեսարժան վայրերի բազմազանությամբ հետ չի մնում Հունաստանից և, արդյունավետ կերպով օգտագործելով իր զբոսաշրջային ներուժը, ինչպես նաև հիմնվելով զբոսաշրջային ոլորտի արտասահմանյան առաջավոր փորձի վրա, կարող է զբոսաշրջային շուկայում վայելել Հունաստանի պես մեծ պահանջարկ: Հարկ է ընդգծել, որ Հունաստանի համեմատ Հայաստանի Հանրապետության դիտարկվող ոլորտի զարգացումները անհամաչափ են, քանի որ Հունաստանը դարձել է աշխարհում զբոսաշրջային այցեր ընդունող զարգացած երկրներից 3-րդը: Հաշվի առնելով Հունաստանի զբոսաշրջային ոլորտի զարգացման փորձը, ինչպես նաև ակնկալելով զբոսաշրջային ավելի ընդգրկուն հոսքեր՝ շնորհիվ զբոսաշրջային մասնավոր

[1] Назарян К.: Отношения между Арменией и Грецией основаны на исторической дружбе, https://www.mfa.am/ru/interviews-articles-and-comments/2017/03/10/dfm-int-ibna/6982

այցերի, որոնք համապատասխան ներդրումների արդյունքում, կարող են վերափոխվել ընտանեկանի, կարող ենք առաջարկել ՀՀ-ում զբոսաշրջության ոլորտի զարգացման հետևյալ մոտեցումները.

- «Մայր Հայաստան» հուշահամալիրի դերն անշուշտ բացառիկ է, սակայն չպետք է մոռանալ նաև զբոսայգու ատրակցիոնային հնարավորությունները, որոնք պետք է արդիականացվեն և դարձվեն մատչելի ամենատարբեր գնողունակություն ունեցող համաքաղաքացիների և զբոսաշրջիկների համար: Ավելին, այգին կարելի է դարձնել նաև ձմեռային՝ հաշվի առնելով նմանատիպ նշանակություն ունեցող զբոսայգիների սուղ լինելը:
- Երևանի կենդանաբանական այգին ևս կարող է բավարարել փոքր տարիքի զբոսաշրջիկների պահանջմունքները: Այգում պետք է ստեղծվեն նաև երեխաների համար այլընտրանքային խաղեր և զանազան խաղ-մրցույթներ, որոնք և կրկնվող դարձած բակային խաղերին կարող են փոխարինել:
- Ընտանեկան, ինչպես նաև զբոսաշրջային այցելությունների լավագույն տարբերակների ցանկն են համալրում, անշուշտ, կրկեսային ներկայացումների այցելությունները, որոնք մշտապես արդիական են: Կրկեսային ներկայացումներից բացի, ներկայիս շենքը նախատեսված է սպորտային միջոցառումների և համերգային ծրագրերի համար:
- Ընտանեկան զբոսաշրջային այցելությունների շարքին է դասվում Տաթևի թևերը (Տաթևեր)՝ Հալիձորը և Տաթևի վանքը իրար հետ կապող ճոպանուղին Սյունիքի մարզում: Նշենք, որ սա նաև հոգևոր ճամփորդություն է, քանզի այստեղից բացվում է գեղեցիկ տեսարան դեպի Տաթևի վանք. լավ կլիներ նաև զբոսավարների կողմից ակնարկ կատարվեր Հայաստանի՝ քրիստոնեությունը որպես առաջինը պետական կրոն հռչակման փաստին, որն ինքնին հոգևոր դաստիարակության նախահիմքեր կարող է ստեղծել երեխաների համար:
- Մեր օրերում զբոսաշրջային մեծ պահանջարկ են վայելում Գեղարքունիքի մարզում գտնվող Սևանա լիճն ու համանուն վանքը, որոնք ունեն առանձնահատուկ և բացառիկ նշանակություն ՀՀ-ի համար: Հարկային արտոնություններով կարելի է ներազդել մատուցվող ծառայությունների գների վրա՝ վերականգնելով Սևանա լճի՝ որպես ընտանեկան հանգստի գոտու երբեմնի կարգավիճակը[1]:

Հայաստանի և Հունաստանի միջմշակութային հարաբերությունները, ինչպես նաև կրթության և գիտության ոլորտներում փոխանակման ծրագրերը նույնպես կարող են ամուր հիմք ստեղծել հետագա համագործակցության խորացման համար: Միաժամանակ հատուկ ուշադրություն պետք է հատկացնել երկու երկրների միջև առևտրի և ներդրումների ծավալների ավելաց-

[1] Իսահակյան Ռ., Զբոսաշրջության ոլորտի զարգացումը՝ որպես կայուն տնտեսական աճի նախադրյալ, զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2019 թ., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 71-73:

ման հիմնահարցերին: Հաշվի առնելով Հունաստանի տնտեսության զարգացման ներկայացված փորձը՝ կարող ենք առաջարկել ՀՀ տնտեսական վիճակի բարելավման հետևյալ ուղիները.

- հայրենական և օտարերկրյա ներդրողների համար հավասար և գրավիչ հարկային գործիքակազմի մշակում և կիրառում, որոշակի պայմաններում և ժամանակահատվածում հարկային դրույքաչափերի նվազեցման հնարավորության ապահովում:
- Ինովացիոն և ներդրումային գործունեության ֆինանսավորման մատչելիության ապահովում՝ արտոնյալ վարկավորման և անհատույց պետական ֆինանսավորման միջոցով:
- Կրթության և գիտության ոլորտներում հայ-հունական համագործակցության ակտիվացում՝ մրցունակ մասնագիտական կադրերի պատրաստման, ինովացիոն արտադրանքների, տեխնոլոգիաների և տեխնոլոգիական լուծումների արդյունավետ փոխանակման նպատակով:
- Տնտեսության տարբեր ոլորտներում (հանքարդյունաբերություն, էներգետիկա, ռազմաարդյունաբերություն, մետաղագործություն, քիմիական արդյունաբերությունը, թեթև և սննդի արդյունաբերություն, գյուղատնտեսություն, վերամշակող արդյունաբերություն, զբոսաշրջություն և այլն) հայ-հունական համատեղ մասնավոր, պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների հիմնադրում:
- Հայ-հունական համատեղ մշակութային միջոցառումների և փոխադարձ այցելությունների կազմակերպում՝ երկու երկրներում զբոսաշրջության զարգացման խթանման նպատակով:

Ամփոփելով՝ անհրաժեշտ է նշել, որ Հունաստանի տնտեսության զարգացման դիտարկված փորձի և հոդվածում ներկայացված գործնական առաջարկությունների կիրառումը կարող է նպաստել ՀՀ տնտեսության տարբեր ոլորտների արդյունավետ զարգացմանը, ներդրումների ծավալների ավելացմանը, ընկերությունների ինովացիոն գործունեության խթանմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը, պետական բյուջեի եկամուտների ավելացմանը, ինչպես նաև արտաքին տնտեսական և քաղաքական կապերի ամրապնդմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Զբոսաշրջային ամենաթրենդային 10 երկրների ցանկը, 2020 թ., https://ampop.am/number-of-tourists-increasing/, booking.com.
2. Իսահակյան Ռ., Զբոսաշրջության ոլորտի զարգացումը՝ որպես կայուն տնտեսական աճի նախադրյալ, զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2019 թ., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 71-73:
3. ՀՀ վիճակագրական կոմիտեի վիճակագրական տվյալների բազաներ, միջազգային զբոսաշրջություն, 2009-2019 թթ., https://www.armstat.am

4. Вачнадзе Г., Головлева А., Грибков А., Ермаченков И., Комаров И., Мишина О., Сальберг К., Стенина Т., Тимофеева Л.. Проект ПОЛПРЕД: Деловая Греция, том III. Экономика и связи с Россией в 2002-03 гг. Москва: Издательство «ПИК ВИНИТИ», 2004, 34 с. ISBN 5-900034-38-0
5. Греция, https://knoema.ru/atlas/Греция
6. Греция, Население, https://knoema.ru/atlas/Греция
7. Греция / Участие в международных организациях, основные внешнеполитические контрагенты и партнёры, отношения с Россией, http://www.hyno.ru/tom1/573.html
8. Греческое экономическое чудо, https://dic.academic.ru/dic.nsf/ruwiki/1470498#cite_note-1
9. Назарян К., Отношения между Арменией и Грецией основаны на исторической дружбе, https://www.mfa.am/ru/interviews-articles-and-comments/2017/03/10/dfm-int-ibna/6982
10. Опубликован рейтинг Doing Business 2020: Грузия обогнала Великобританию, Норвегию и Швецию, https://internationalinvestment.biz/business/1475-opeblikovan-reyting-doing-business-2020-gruziya-obognala-velikobritaniyu-norvegiyu-i-shveciyu.html
11. Рейтинг инновационных экономик – 2020: на первое место вышла Германия, https://theworldonly.org/rejting-innovatsionnyh-ekonomik-2020/
12. Современная Греция в мировой экономике и политике. Сборник статей, отв. ред. – Ю.Д. Квашнин. М.: ИМЭМО РАН, 2013, 184 с. ISBN 978-5-9535-0381-5
13. Усанов П., Ретроспектива экономической мысли. От Древней Греции до современности, Монография, СПб, издательство Страта, 2019, 300 с. ISBN 978-5-6041463-7-8
14. Экономическая история Греции и греческого мира, https://ru.qaz.wiki/wiki/Economic_history_of_Greece_and_the_Greek_world

References

1. Zbosashrjayin amenat'rendayin 10 erkrneri canky', 2020 t'., https://ampop.am/number-of-tourists-increasing/, booking.com.
2. Isahakyan R'., Zbosashrjowt'yan olorti zargacowmy'` orpes kayown tntesakan atwi naxadryal, zargacman himnaxndirnery' & dranc lowc'man owghinery' Hayastani Hanrapetowt'yownowm, Er&an 2019 t'., HH GAA «Gitowt'yown» hrat., e'j 71-73
3. HH vitwakagrakan komitei vitwakagrakan tvyalneri bazaner, mijazgayin zbosashrjowt'yown, 2009-2019 t't'., https://www.armstat.am
4. Vachnadze G., Golovleva A., Gribkov A., Ermachenkov I., Komarov I., Mishina O., Sal'berg K., Stenina T., Timofeeva L.. Proekt POLPRED: Delovaja Grecija, tom III. Jekonomika i svjazi s Rossiej v 2002-03 gg. Moskva: Izdatel'stvo «PIK VINITI», 2004. -34 s. ISBN 5-900034-38-0
5. Grecija, https://knoema.ru/atlas/Grecija

6. Grecija, Naselenie, https://knoema.ru/atlas/Grecija
7. Grecija / Uchastie v mezhdunarodnyh organizacijah, osnovnye vneshnepoliticheskie kontragenty i partnjory, otnoshenija s Rossiej, http://www.hyno.ru/tom1/573.html
8. Grecheskoe jekonomicheskoe chudo, https://dic.academic.ru/dic.nsf/ruwiki/1470498#cite_note-1
9. Nazarjan K.: Otnoshenija mezhdu Armeniej i Greciej osnovany na istoricheskoj druzhbe, https://www.mfa.am/ru/interviews-articles-and-comments/2017/03/10/dfm-int-ibna/6982
10. Opublikovan rejting Doing Business 2020: Gruzija obognala Velikobritaniju, Norvegiju i Shveciju, https://internationalinvestment.biz/business/1475-opeblikovan-reyting-doing-business-2020-gruziya-obognala-velikobritaniyu-norvegiyu-i-shveciyu.html
11. Rejting innovacionnyh jekonomik – 2020: na pervoe mesto vyshla Germanija, https://theworldonly.org/rejting-innovatsionnyh-ekonomik-2020/
12. Sovremennaja Grecija v mirovoj jekonomike i politike, Sbornik statej, Otv. red. – Ju.D. Kvashnin. – M.: IMJeMO RAN, 2013. – 184 s. ISBN 978-5-9535-0381-5
13. Usanov P., Retrospektiva jekonomicheskoj mysli. Ot Drevnej Grecii do sovremennosti, Monografija, SPb: Izdatel'stvo Strata, 2019. -300 s. ISBN 978-5-6041463-7-8
14. Jekonomicheskaja istorija Grecii i grecheskogo mira, https://ru.qaz.wiki/wiki/Economic_history_of_Greece_and_the_Greek_world

ՀՈՒՆԱՍՏԱՆ. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵԶՐԵՐ

ԱՐՄԻՆԵ ԶԱԽԱՐՅԱՆ
ՌԱԶՄԻԿ ԻՍԱՀԱԿՅԱՆ

Համառոտագիր: Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման ներկայիս փուլում առանձնահատուկ նշանակություն ունեն արտասահմանյան երկրների տնտեսությունների զարգացման առաջավոր փորձի ուսումնասիրությունն ու արդյունավետ կիրառումը: Հատկապես մեծ ուշադրության է արժանի այն երկրների փորձը, որոնք աշխարհաքաղաքական տեսանկյունից որոշակի ընդհանրություններ ունեն մեր երկրի հետ: Այս համատեքստում որոշակիորեն կարևորվում է Հունաստանի տնտեսության զարգացման փորձի ուսումնասիրությունը, ինչն էլ պայմանավորում է մեր հետազոտության թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակն է Հունաստանի տնտեսական փորձի ուսումնասիրության միջոցով Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման գործոնների և մեխանիզմների բացահայտումը: Հետազոտության խնդիրն է Հունաստանի տնտեսության առանձին ոլորտների զարգացման գործընթացների վերլուծության արդյունքների հիման վրա ՀՀ տնտեսության ոլորտների զար-

գացման հավանական ուղիների մշակումը:

Հետազոտությունների ընթացքում կիրառվել են համակարգային և իրավիճակային վերլուծության, տնտեսավիճակագրական խմբավորումների, ինդուկցիայի և դեդուկցիայի, համեմատական և գործոնային վերլուծությունների, գիտական աբստրահման մեթոդները:

Գիտական նորույթը: Հունաստանի տնտեսության զարգացման փորձի կիրառման արդյունքում հայրենական և օտարերկրյա ներդրողների համար հավասար և գրավիչ հարկային գործիքակազմի մշակումը և կիրառումը, ինովացիոն և ներդրումային գործունեության ֆինանսավորման մատչելիության ապահովումը, զբոսաշրջության ոլորտում ներդրումների ավելացման միջոցով զբոսաշրջային մասնավոր այցերն ընտանեկանի վերափոխումը (հատկապես մանկական հանգստի կազմակերպման շեշտադրմամբ), կրթության և գիտության ոլորտներում մրցունակ մասնագիտական կադրերի պատրաստման, ինովացիոն արտադրանքների, տեխնոլոգիաների և տեխնոլոգիական լուծումների արդյունավետ փոխանակման միջոցով հայ-հունական համագործակցության ակտիվացումը, տնտեսության տարբեր ոլորտներում հայ-հունական համատեղ մասնավոր, պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների հիմնադրումը, երկու երկրներում զբոսաշրջության զարգացման խթանման նպատակով հայ-հունական համատեղ մշակութային միջոցառումների և փոխադարձ այցելությունների կազմակերպումը մեծապես կարող են նպաստել ՀՀ տնտեսության համաչափ զարգացմանը:

Բանալի բառեր՝ *պետական կառավարում, տնտեսություն, զարգացում, պետական աջակցություն, ներդրումներ, խթանում, ֆինանսավորում, արդյունավետություն*

ГРЕЦИЯ: ГРАНИ СОТРУДНИЧЕСТВА

АРМИНЕ ЗАХАРЯН
РАЗМИК ИСААКЯН

Аннотация: На современном этапе развития экономики Республики Армения особое значение имеет изучение и эффективное применение передового опыта развития экономик зарубежных стран. Особого внимания заслуживает опыт тех стран, которые имеют определенное сходство с нашей страной с геополитической точки зрения. В данном контексте важно изучение опыта развития экономики Греции, что определяет актуальность темы нашего исследования.

Целью исследования является выявление факторов и механизмов экономического развития Республики Армения посредством изучения экономического опыта Греции. Задачей исследования является разработка возможных путей развития экономики Армении на основе результатов анализа процессов развития отдельных секторов греческой экономики.

В ходе исследования использовались методы системно-ситуационного анализа, экономико-статистических группировок, индукции и дедукции, сравнительного и

факторного анализа, научной абстракции.

Научная новизна. Разработка и применение равного и привлекательного налогового инструментария для отечественных и иностранных инвесторов; обеспечение доступного финансирования инновационной инвестиционной деятельности; преобразование частных туристических визитов в семейные (особенно с упором на организацию детского отдыха) посредством увеличения инвестиций в сфере туризма; активизация армяно-греческого сотрудничества в сфере образования и науки посредством подготовки конкурентоспособных специалистов, эффективного обмена инновационных продуктов, технологий и технологических решений; создание в различных сферах экономики совместных армяно-греческих частных, государственных компаний и компаний с государственным участием; организация совместнх армяно-греческие культурных мероприятий и взаимных визитов с целью стимулирования развития туризма в обеих странах в результате использования опыта развития экономики Греции могут значительно способствовать сбалансированнму развитию экономики Республики Армения.

Ключевые слова: *государственное управление, экономика, развитие, государственная поддержка, инвестиции, стимулирование, финансирование, эффективность*

GREECE: EDGES OF COOPERATION

ARMINE ZAKHARYAN
RAZMIK ISAHAKYAN

Abstract: At the present stage of development of the economy of Republic of Armenia, it is of particular importance to study and effectively apply the best practices in the development of economies of foreign countries. The experience of those countries that have a certain similarity with our country from a geopolitical point of view deserves special attention. In this context, it is important to study the experience of the development of the Greek economy, which determines the relevance of the topic of our research.

The aim of the study is to identify the factors and mechanisms of economic development of the Republic of Armenia by studying the economic experience of Greece. The task of the study is to develop possible ways of developing the Armenian economy based on the results of the analysis of the development processes of individual sectors of the Greek economy.

The study used the methods of system-situational analysis, economic and statistical groupings, induction and deduction, comparative and factor analysis, scientific abstraction.

Scientific novelty. Development and application of equal and attractive tax instruments for domestic and foreign investors; ensuring affordable financing for innovative investment activities; transformation of private tourist visits into family visits (especially with an emphasis on organizing children's recreation) through increased investment in tourism; activation of the Armenian-Greek cooperation in the field of education and science through the training of competitive specialists, effective exchange of innovative products, technologies and technological solutions; the creation of joint Armenian-Greek private, state-owned companies and companies with state participation in

various spheres of the economy; the organization of joint Armenian-Greek cultural events and mutual visits in order to stimulate the development of tourism in both countries as a result of using the experience of the development of the Greek economy can significantly contribute to the balanced development of the economy Republic of Armenia.

Keywords: *public administration, economy, development, government support, investment, stimulation, financing, efficiency*